Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ <<ՀՀ Արարատի մարզի Սիփանիկի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի

ֆիզիկայի (6 դասաժամ), երաժշտության (2 դասաժամ), կերպարվեստի (2 դասաժամ), ռուսաց լեզվի (2 դասաժամ) և տեխնոլոգիայի (4-ական դասաժամ, տղաների և աղջիկների խմբեր) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլ անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև նոյեմբերի 9-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 12-ին՝ ժամը 13:00-ին, **Արարատի մարզի Սիփանիկի հիմնական դպրոցում. հասցեն՝ գ. Սիփանիկ Գյումրու փողոց թիվ 1:**

Տեղեկությունների համար զանգահարել՝ /093/ 630-280 հեռախոսահամարով:

ՏՆՕՐԵՆ Մ. ՍԱՀԱԿՅԱՆ